

**ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ-ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՐԶԱՆԻ ԵՎ
« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԶԵՎ**

Երևանի Նոր-Նորք վարչական շրջանը և «Գեղարքունիքի մարզպետարանը, այսուհետ Կողմեր, ցուցաբերելով համատեղ ցանկություն և մտադրություն զարգացնելու երկարաժամկետ և փոխշահավետ համագործակցություն, կնքեցին մտադրությունների մասին սույն արձանագրությունը հետևյալի մասին

Հոդված 1

Կողմերը տեղական ինքնակառավարման մակարդակում համագործակցությունը համարելով կարևոր տարր, դրա զարգացման համար կստեղծեն համապատասխան պայմաններ անմիջական կապերի, համատեղ կարծիքների փոխանակման, պաշտոնական և գործնական պատվիրակությունների փոխանակման, հրատարակությունների և տեղեկատվության, արտադրանքների ցուցահանդեսների փոխանակման միջոցով:

Հոդված 2

Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն գործնական համագործակցության զարգացման համար առևտրի, մշակույթի, կրթության, տուրիզմի, սպորտի, սոցիալական ապահովության և առողջապահության բնագավառներում, կիրականացնեն համատեղ ծրագրեր:

Հոդված 3

Համատեղ գործունեությունը կհամաձայնեցվի և կհստակեցվի գործընկերային հարաբերությունների զարգացման վերաբերյալ Ծրագրերի ստորագրման միջոցով:

Հոդված 4

Սույն Մտադրությունների մասին արձանագրությունը հիմք կհանդիսանա Կողմերի միջև համագործակցության կոնկրետ բնագավառներում այլ համաձայնագրեր կազմելու համար:

Հոդված 5

Մտադրությունների մասին արձանագրությունը կազմված է հայերեն լեզվով՝ 2 օրինակից:

Նոր-Նորք վարչական
շրջանի ղեկավար

Գեղարքունիքի մարզպետ

Գասպարյան Մ. Լ.

Պողոսյան Ն. Ղ.